

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

338.14

4-63

Ի Կ Ի Ս Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ № 4

ԿՈՆՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՋԱԲՈՒՆԱԿԱՆ
ԱՊՐԱՆԲԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԻ
ԱՅԽԱՏԱՆԲՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐԴՈՒՄԸ
ՅԵՎ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆԸ

(Համաժողովրդական խոգսբուժական
կոլեկցիոնների կանոնադրությունը)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ-Ի ԿՈՆՏՆՏԱԵՆՏՐՈՆԻ

ՅԵՐԵՎԱՆ

1931 թ.

22 MAY 2013

30.588

ՊԵՏՐՈՍԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ ԵՆԵՑ
ԳԼԱՎԼԻՏ 6923 (Բ)
ՏԻՐԱԺ 1500

338.14

4-63

ար

05 JAN 2010

Հաստատում եմ՝ Համաժողով-
թեան հետևի տեղակալ և
Կոլտնտեսությունի նախագահ՝
ՅՈՒՐԿԻՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԿՈՒՆՈՋԱՅԻՆ ԽՈՋԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ
ՖԵՐՄԱՆԵՐԻ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն կանոնադրությունը արվում է
իրեր օրենսդրության և կարող է փոփոխվել ու լրաց-
վել համապատասխան կոլտնտեսությունների
վարչությունների վերջնամամբ:

Կոլտնտեսության խոզաբուծական ապրանքային
ֆերմաների հաջողությունն ամբողջապես կախ-
ված է նրանից, թե ինչպես կոլտնտեսություննե-
րը ու կոլտնտեսիկները կտանեն յերամակի արտա-
դրության բարելավման աշխատանքները, կգոր-
ծադրեն զոո-անասնաբուծական ձեռնարկումները,
կտանեն խոզանոցների շինարարությունը, կա-
պահվեն ֆերմաները կերով, կտան իրենց միջից
ամենալավ և ամենափորձված կոլտնտեսիկներին՝
ֆերմաներում աշխատելու համար, ինչպես նաև
կկազմակերպեն սոցմրցումը և կմտցնեն աշխա-
տանքի մեջ հարվածախուժյուն, կկազմակերպեն
պայքարը կուլակուլյան և նրա ազնվատույզի

Ս. Ա. ՄԱՍՆԻՔԻՆ
Ս. ՄԱՍՆԻՔԻՆ 1990

14928-170

դեմ, ինչպես նաև կբարձրացնեն աշխատանքի կարգապահութիւնը (գլխացիպլինան) և տնտեսական խնայողութիւնը:

1. ԿԽԱՑ-ները (կոլխոզային խողարուծական սայրանքային ֆերմաները) վարելու համար Կոլտնտեսութեան վարչութիւնը նշանակում է մի վարել:

Ֆերմայի վարիչներին հաստատում է Համա-միութենական խողարուծական Կոլտնտէկնտրոնի Հանրապետական կամ Յերկրային (վարչային) բաժանմունքը (լիազորը):

2. Ֆերմայի վարիչը նշանակվում է վոչ պո-կաս, քան յերկու տարի ժամնակով: Այս ժամկե-տից առաջ կառավարչին փոխել կարելի չէ միայն Կոլտնտեսութեան վարչութեան և Համամիութե-նական Խողարուծ. Կոլտնտէկնտրոնի լիազորի փոխադարձ համաձայնութեամբ:

Իսկ յետեւ կոլխոզային խողարուծական սայ-րանքային ֆերման միջկոլխոզային և, այդ դեպ-քում ֆերմայի վարիչը նշանակվում ու փոփոխ-վում է Համամիութենական Խողարուծկոլտնո-կէնտրոնի լիազորի կողմից:

3. Ֆերմայի վարիչը միանձնյա ղեկավարում է ֆերմայի ամբողջ գործը և միանձնյա եւ կրում է ֆերմայի կադմակերպման ու տնտեսութիւնը վարելու ամբողջ պատասխանատվութիւնը:

4. ԿԽԱՑ-ի վարիչին են յենթարկվում Ֆեր-մայի բոլոր աշխատողները՝ թե կոլտնտեսութեան կողմից նշանակված կոլտնտեսականները և թե վարձված մասնադէտները:

ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻ ԱՄՐԱՅՈՒՄԸ ԿԽԱՑ-Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

Խողարուծական ֆերման մշտական սպասար-կելու համար, կոլտնտեսութիւնն իր միջից առ-լիս է անհրաժեշտ թվով հարվածային կոլխոզ-նիկներ, ինչպես նաև փորձառութիւն ունեցող և խողարուծութեամբ դրադվելու ցանկութիւն ունեցող կոլխոզնիկներ:

1. ԿԽԱՑ-ներում աշխատանք տանլու համար կոլտնտեսութիւններից նշանակված կոլխոզնիկ-ները ամբողջում են ֆերմայում մշտական աշ-խատանքի: Ֆերմայի ավելի բարվաճ աշխատանք-ները շրջանում (խոզերի ծննդաբերութեան ժա-մանակ և այլն), խորհուրդ և տրվում՝ ամբողջ-նել լրացրուցիչ քանակութեամբ կոլխոզնիկներ այդ շրջանի աշխատանքները կատարելու համար:

2. Նայած ֆերմայի մեծութեանը, կարելի չէ առաջարկել աշխատանքի կադմակերպման հե-տեվյալ ձևերը՝

ա) Այն ֆերմաներում, վորտեղ յերամակր
100 մայր խոզից աւելի չէ, բրիգադներ չեն կադ-

մակերպվում և խողապահների աշխատանքների անմիջական ղեկավարութունը դրվում և Ֆերմայի վարիչի վրա: Իսկ Ֆերմայում աշխատող յուրաքանչյուր կոլխոզնիկին ստրացվում և խողերի վորոշ խումբ (քանակութուն), վորոնց նա խնամում և և վորոնց համար պատասխանատու չե Ֆերմայի վարիչի առաջ:

բ) Այն ֆերմաներում, վորտեղ խողերի յւրամեկը տեղավորված և մի քանի խողանոցներում և վորտեղ կան 100-ից ավելի ծնու մայր խողեր, աշխատանքը կազմակերպվում և բրիգադներով: Յանկալի յե յուրաքանչյուր խողանոցում ունենալ մի բրիգադ այդ բրիգադը կատարում և խողանոցի խնամքի հետ կապված ամբողջ աշխատանքը:

Բրիգադը գլխավորում և ավագ խողապահը (բրիգադիրը), վորը մատղաների խնամքի, կերակրելու և սրահելու բոլոր աշխատանքների համար. պատասխանատու չե վարիչի առաջ: Բրիգադի ներսում յուրաքանչյուր կոլխոզնիկին ամացվում և խողերի վորոշ խումբ (քանակութուն):

գ) Այն խողաբուծական ֆերմաներում, վորտեղ կա մոտ 1500 և ավելի խող, աշխատանքն ավելի լավ կազմակերպելու համար, նպատակահարմար և անասունները բաժանել առանձին

խմբերի (հղի և ծնած մերուններ, մատղաներ, բալոդներ) և սրահել առանձին խողանոցներում: Այս անասունների յուրաքանչյուր խումբը սպասարկելու համար կազմակերպվում են առանձին բրիգադներ և յուրաքանչյուր բրիգադի ներսում սմեն մի խողապահին անպայման կցվում են վորոշ թվով անասուններ, վորոնց նա մշտական սպասարկում և:

Յուրաքանչյուր բրիգադի (մատղաները, դաստիարակող, հղի և ծնած մայրերը խնամող, (բաղ) մեծն և ավագ խողապահը (բրիգադիրը), վորը նշանակվում և Ֆերմայի վարիչի կողմից:

Ավագ խողապահը պատասխանատու չե իր խնամքի տակ գտնվող խողերի ամբողջ խմբի գրության համար, ինչպես նաև բրիգադի ամբողջ կազմի աշխատանքների համար:

3. Բոլոր թված գեպներում ել յուրաքանչյուր խողապահին անպայման ստրացվում և խողերի վորոշ խմբակ (քանակ), վորոնց նա մշտապես խնամում և և վորոնց գրության համար նա պատասխանատու չե:

ԿԽՍՖ-ՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆԸ.

1. Խողաբուծական ֆերմաներում բոլոր աշխատանքները տարվում են ներքին կարգ ու կանոնների համաձայն: Այդ կարգ ու կանոնը մշա-

կում և Ֆերմայի վարիչը, իսկ հաստատում և կողմնասուլիսյան վարչութիւնը:

2. Խողարուծական Ֆերմայի ամեն մի աշխատակիցը պարտավոր և ճշտորեն կատարել իր համար մշակված՝ որովա կարգը:

Որովա որինակելի կարգը կարող և լինել հետևել:

Աշխատանքը Ֆերմայում սկսվում և վոչ ուշ, առավոտյան ժամը 5-ից և դառավորվում և մոտավորապես այսպես:

Ա. ՄՍՈՒՐԱՅԻՆ ՊԱՀՎԱԾՔԻ ՇՐՋԱՆՈՒՄ
1. ՀԱՍԱԿԱՎՈՐ ԽՈՋԵՐԻՆ ԽՆԱՄԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ.

Ա. ո ա վ ո տ

(Աշխատանքներն սկսում են առավոտյան ժամը 9-ից վոչ ուշ)

ա) Կերի պատրաստելը և կերակրելը:

բ) Կերակրելուց հետո ջրելը (մաքուր ջրով):

գ) Մսուրների և կերամամանների մաքրելը և ցամքար փոխելը:

Կ ե ս ո թ .

(Աշխատանքներն սկսվում են առավոտյան ժամը 12-ից և վերջանում 4-ից վոչ ուշ):

ա) Կերի պատրաստելը և կերակրելը:

բ) Կերակրելուց հետո մաքուր ջուր տալը:

գ) Կերամանները մաքրելը:

դ) Խողերին դրոսանքի դուրս բերելը և խոլանոց ներս քշելը:

Յ ե ր ե կ ո .

(Աշխատանքներն սկսվում են ժամը 6-ից և վերջանում են յերեկոյան ժամը 8-ից վոչ ուշ):

ա) Կերի պատրաստելը և կերակրելը:

բ) Ջուր տալը:

գ) Կանգնելու տեղը և կերամանները մաքրելը:

2. ԾԵԾԻՑ ԿՏՐԱԾ ԳՈՃԻՆԵՐԻՆ ԽՆԱՄԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ.

Ա. ո ա վ ո տ .

(Աշխատանքները վերջանում են առավոտյան ժամը 9-ից վոչ ուշ):

ա) Գոճիների համար կեր պատրաստելը և կերակրելը:

բ) Կերամանները մաքրելը, խողանոցի ալբիստիդը հալաքելը, կերակրելու բաժանմունքում ալբիստիդ ու ածուխով արկղերը դնելը և ցամքար փոխելը:

գ) Կերամանները դուրս դնելը՝ չորացնելու համար:

Կ Ե Ս Ո Ր .

(Աշխատանքներն սկսվում են առափոռոյան ժամը 10-ից և վերջանում են ժամը 5-ից վոչ ուշ) :

ա) Կեր պատրաստելը և դոճիկներին կերակրելը :

բ) Կերամանները մաքրելը :

գ) Գոճիկներին զրոսանքի տանելը :

դ) Կեր պատրաստելը և դոճիկներին կերակրելը :

ե) Կերամաններ մաքրելը :

զ) Կեր պատրաստելը և դոճիկներին կերակրելը :

ը) Կերամանները մաքրելը :

Յ Ե Ր Ե Կ Ո .

(Աշխատանքներն սկսվում են ժամը 5-ից և վերջանում են 8-ից վոչ ուշ) :

Մատղաշներին բռնելու որակարգը նույնն է, ինչ վոր հասակավոր խոզերին խնամելու ժամանակ :

Բ. ԽՈՉԵՐԻՆ ԱՐԱՇԵՑՆԵԼՈՒ ՇՐՋԱՆՈՒՄ .

Բոլոր հասակի և խմբերի խոզերը պետք է առատորեն ոգտվեն բնական և արհեստական արոտներից :

2. Աչքի առաջ ունենալով, վոր խոզերը հասած և փայտացած խոտեր չեն ուտում, ֆերման պետք է արոտի կուտուրաների ցանքսերի մեջ մտցնի այնպիսի կարգ, վոր խոզերը արածելու ամբողջ շրջանում ասպհոված լինեն հյուսիսից արոտներով : Դրա համար խորհուրդ է տրվում, վորոչ հերթականությամբ ոգտադործել հետևյալ արոտները :

Ամենավաղ (վաղ դարնանը) արոտներ են ստացվում՝

ա) Մաքուր տարեկանից, ավելի լավ է վիկի հետ :

Դրանից հետո զալիս են՝

բ) Գարնան գոնգեղ, գ) վարսակը վիկի հետ, դ) բազմամյա խոտեր՝ առավելադր, յերեքնուկը, մեղրատուլասը (դոննիկ) :

Այնուհետև՝

ե) սոյան, չ) սուդանկան, է) չաքարի սողան, ը) գոնգեղի ձմեռախոտը (ատավա), թ) վիկի յերկրորդ ցանքսը վարսակի հետ, ժ) բազմամյա խոտերի ձմեռախոտը :

Յեվ վերջապես՝

ժա) Հացահատիկների դաշտերը՝ բերքը հաքավելուց հետո, ժբ) արմատապտուղների և պալարապտուղների դաշտերը՝ բերքը հավաքելուց

հետո, միաժամանակ և խոտաբույսերի դաշտե-
րը ու մոլախոտերի աշնան մատղաշ ծիլերը:

3. Ֆերմայի ցանովի արոտներում, ինչպես
նաև այն դյուղահանդերում, վորոնք խոտերով
հարուստ են, շինում են չարժական ցանկապատ-
եր, թեթև ծածկոցներով, խողերը չողից ու
վատ յեղանակներից պաշտպանելու համար: Այդ
դեպքում խողերը խողապահների կարիքը չեն
զգում և ազատվում են արոտներից իրենց ցանկու-
թյամբ, որով ինչ ժամանակ ել վոր լինի:

4. Արոտներում, խողերը չարժական ցանկա-
պատերի մեջ պահելու դեպքում, աշխատանքի
պայմանները չափազանց հեշտանում են:

Կատարվում են հետևյալ աշխատանքները՝

ԽՈՋԵՐԻ ԲՈՂՈՐ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ.

Ա. ու վ. ու տ. յ ա ճ .

(Աշխատանքները կատարվում են մինչև ա-
ռավոտյան ժամը 5-ը):

ա) Խտացած կեր տալը:

բ) Զրելը:

Ճ ա շ Ի ճ .

(Աշխատանքները կատարվում են մինչև ժա-
մը 12-ը):

ա) Խտացրած կեր տալը:

բ) Զուր տալը և լողացնելը (վորտեղ այդ
հնարավոր է):

Յ ե ր ե կ ո յ ա ճ .

(Աշխատանքը կատարվում է յերեկոյան
և վերջանում է ժամը 8-ից վոչ ուշ):

ա) Խտացրած կեր տալը:

բ) Զուր տալը:

Խողերին բաց արոտներում պահելու ժամա-
նակ, աշխատանքի կարգը հետևյալն է՝

ԾՆԱԾ ՄԱՅՐԵՐԻ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ.

Ա. ու վ. ու տ. յ ա ճ .

(Աշխատանքը սկսվում է առավոտյան ժամը
5-ից և վերջանում է առավոտյան ժամը 11-ից
վոչ ուշ):

ա) Խտացարած կեր և ջուր տալը. բ) արոտ,
դ) լողացնելը (վորտեղ հնարավոր է) և ջուր տա-
լը. դ) խտացրած կեր տալը:

Ճ ա շ Ի ճ .

(Աշխատանքը կատարվում է մինչև ժամը
2-ը):

ա) Լողացնելը (վորտեղ այդ հնարավոր է)
և ջուր տալը, բ) խտացրած կեր տալը, դ) արոտ:

Յ ե ր ե կ ո յ ա ճ .

(Մինչև յերեկոյան ժամը 7-ը):

ա) Խտացրած կեր և ջուր տալը, բ) ծծից
կարածների և բուլոզների խմբերի համար աշ-

խատանքները նույնն են, ինչ վոր ծնած մայրերի խմբերի համար:

**ՎԱՐԱՋՆԵՐԻ ՅԵՎ ՎՈՉ ՀՂԻ ՄԵՐՈՒՆՆԵՐԻ
ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ.**

Ա ռ ա վ ո տ յ ա ն .

(Սկսվում է առավոտյան ժամը 5-ից և վերջանում է առավոտյան ժամը 11-ից վոչ ուշ):

ա) Արոտ, բ) լողացնելը և ջուր տալը, գ) ուժեղ կեր տալը:

Ճ ա շ ի ն .

(Սկսվում է առավոտյան ժամը 11-ից և տեւում է մինչև յերեկոյան ժ. 7-ը):

ա) Հանդիստը և լողացնելը, (վորտեղ այդ հնարավոր է), բ) արոտ, գ) խտացրած կեր և ջուր տալը:

5. Արոտներում արածացնելու ժամանակ, լինի այդ չարժական ցանկապատում կամ բաց արոտներում, խողերին բաժանում են հետեյալ առանձին խմբերի՝

Ծնած մայրերի խումբ.

Հղի » »

Վոչ հղի » »

Ծծից կտրած գոճիների խումբ.

Բաժնող մատղաշ խողերի »

Վարացների խումբ:

Յեթի վարացների քանակը այնքան էլ մեծ չէ, նրանց պահում են կապած. պետք է այնպես կապել, վոր վարադը չխեղդվի կապը վոտների մեջ չխճճվի: Դրա համար կապը պետք է շինել յերկու տափակ փորկապներից՝ միացված յերկու գոտիով: Խողին կապելիս մեկ փորկապը դցում են վիզը, մյուսը կապում են կրծքին՝ առաջի վոտների հետեւը: Փորկապները ամրացվում են իրար կաշե փոկերով ու կոճկում փոկերի ծայրերին կարած չափուստով: Առաջի՝ վզի փորկապի մի ծայրին ամրացվում է թուկ, վորի մյուս ծայրը կապում են գետնին խփած ցցից:

Ամենորյա աշխատանքների այս որինակելի կարգը կարող է փոփոխուիթյան յենթարկվել, նա՜յած տեղի պայմաններին, սակայն կեր պատրաստելը, կերակրելը, ջուր տալը, շենքերը մաքրելը և այլն, յուրաքանչյուր որ պետք է կատարվի միևնույն ժամին, վորովհետև տարբեր ժամանակներում կերակրելն անողում է անասունների վրա և իջեցնում նրանց արտադրողականությունը:

7. Ֆերմայում աշխատող յուրաքանչյուր կոլխոզնիկ պետք է իմանա իր պարտականությունները և անասուններին խնամելու կանոնները:

ՖԵՐՄԱՅԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

1. Ֆերմայի վարիչն անձնապես պատասխանատու չէ՝ Ֆերմայի կազմակերպման, նրա բոլոր աշխատանքների գրվածքի ու ընթացքի, ինչպես նաև արտադրական պլանի կենսագործման համար: Սրանց հետ միասին նա պատասխանատու չէ խողերի հիվանդանալու, սատկելու, ինչպես և Ֆերմայում տարափոխիկ հիվանդություններ մուտք գործելու դեպքերում: (Վարակիչ հիվանդությունների մուտք գործելը կանխելու համար Ֆերմայի վարիչը պարտավոր է մտցնել այնպիսի կարգ, ըստ վորի մասնավոր անձանց չթույլատրվի մտնել Ֆերմայի տերիտորիան, առավելապես խոզանոցները): Նա պատասխանատու չէ նաև մեռած գոմիներ ծնվելու ու ծնված գոմիների սատկելու, մերունների ստերվություն, Ֆերմայի կարգի ու մաքրություն համար, և այլն: Խոզապահների կողմից խոզերին ծեծելու, Ֆերմայից խոզեր կորչելու կամ ծախվելու դեպքերում նույնպես պատասխանատու չէ Ֆերմայի վարիչը:

2. Ֆերմայի վարիչը համալրում է յերամասնիչը, կազմակերպում է խոզերի բուժումը և կրտնտեսությունն ու Խոզաբուծկությանտկենտրոնի վարչությունների միջև կնքված պայմանագրերով նախատեսված պլանի համաձայն, միջերոգ

որդաններին և հանձնում Ֆերմայի արտադրանքի ապրանքային մասը:

3. Ֆերմայի շինարարությունը կատարում է այն հաշվով, վոր ամբողջ յերամակը ադահովի բնակարանով:

4. Կազմակերպում և ղեկավարում է Ֆերմայի բոլոր աշխատանքները, բաժանում է աշխատանքը կոլխոզնիկների մեջ և ամրացնում նրանց խողերի վորոչ խմբի կամ ել կցում է նրանց ըստ աշխատանքի տեսակի:

5. Գործադրում է Ֆերմայի արտադրական պլանով նախատեսված գոտեխնիկական և տնտեսարուժական ձեռնարկումները:

6. Կազմակերպում է կերահայթայթման ու կերերի պահպանման գործը, ոգտագործում է բոլոր հնարավորությունները կազմելու կերի ֆոնդեր (կալիչ ու յուղհան մեքենաներից, գործարաններից ստացված ավելցուկ-մնացորդներ և այլն):

7. Ղեկավարում է կերի ոգտագործումը և կերակրելու տեխնիկան:

8. Պլանավորում է Ֆերմայի ամբողջ աշխատանքը:

9. Կազմակերպում ու ղեկավարում է արտադրության ու աշխատանքի հաշվառումը:

10. Ղեկավարում է հալահրդեհային ձեռ-

նարկումները և միջոցներ ե ձեռք առնում անվտանգ պահելու Ֆերմայի դույնն ու արժեքները:

11. Իր ամբողջ աշխատանքը տանում է Ֆերմաների կառավարման վերաբերյալ մշակված կանոնադրության հիման վրա, վորը հաստատված է Կոլլեգիենտրոնի կողմից:

ԱՆԱՍՆԱԲՈՒԾԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

1. Անասնաբուծը Ֆերմայի վարիչի հետ միասին, կազմում է խողֆերմայի արտադրական պլանը:

2. Մշակում և գործադրում է Ֆերմայում բոլոր զոոտեխնիկական և անասնաբուծական ձեռնարկումները, կատարում է յերամակի վերաբերյալ գրանցումները, ինչպես նաև խողերի կշռումներն ու չափումները:

3. Ֆերմայի վարիչի հետ միասին, մշակում է կերակրելու նորմաները, կազմակերպում և ղեկավարում է անասունների կանոնավոր կերակրումը նորմաներով:

4. Ֆերմայի մեքուռների և վարադների մեջ խոտանում (բրակովկա) է կատարում:

5. Կատարում է ռեմոնտացու (յերամակի կազմալրման համար) մատղաշների ընտրություն և ջոկում է բավոզ խողերը:

6. Սահմանում է գուգալորման կարգը (ձեռ-

քով կամ ագատ), մշակում է գուգալորման և ծնելու շրջանում տարվելիք աշխատանքների պլանը: Կյանքի մեջ է կիրառում գուգալորման ու ծնելու համար սահմանված կարգը:

7. Կազմակերպում ու վարում է խողաբուծության վերաբերյալ կուրսեր, դասախոսություններ, զրույցներ՝ տեխնիկան մասսաների մեջ տարածելու կարգով:

8. Սահմանում է արոտային պահվածքի պլանը և ստուգում է նրա կիրառումը:

9. Հետևում է Ֆերմայի սանիտարական դրությունը և նրա անասնաբուծական բարեկեցիկ վիճակին:

10. Անասնաբուծը անձամբ պատասխանատու յե Ֆերմայի սանիտարական և անասնաբուծական գրություն համար:

Ֆերմայի դրությունը նորմալ (զոոտեխնիկական տեսակետից) կարելի յե համարել, յերբ՝

ա) Բոլոր անասունները բաժանված են խմբերի՝ ըստ նրանց հասակի, բուժան, բնավորության և նման հատկանիշների:

բ) Կերակրումն ու խնամքը տարվում է վորոշված նորմաներով ու կանոններով:

գ) խողապահները ղիտեն իրենց պարտականությունները և բարեխղճությամբ կատարում են:

դ) Սահմանված ե և զործադրվում ե զոտեխնիկական վորոչ կարգ (բեժիմ) ղվորով կանխվում ե հիվանդութունների յերևան դալը, վերանում են մատղաշների և մնացած յերամակի սատկելու դեպքերը, ապահովվում ե սմբողջ ժամանակաշրջանում խոզերի նորմալ կերակրումը ու մեքուենների վոչ պակաս 90 տոկոսի հղխմալը:

է) Ֆերմայի շենքն ոգտադործվում ե ուսցիոնալ ձևով, և խոզերը առողջ են, լիքը և աշխուժ:

զ) Ֆերմայում տարվում են բոլոր զոտեխնիկական դրանցումները:

ը) Տարվում են սխտեմատիկ աշխատանքներ յերամակի սղնվացման համար և այլն:

ՏԵՆՆԻԿ ԽՈՉԱԲՈՒԾԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

1. Ղեկավարում ե խողարուծության արտադրական աշխատանքը և անասնարուծի բացակայության դեպքում, կազմում ե կերի ուսցյոնը, մշակում ե զոտանասնարուծական միջիմումը և ֆերմայի վարիչի հետ կազմում ե ֆերմայի արտադրական պլանը:

2. Հետևում և ղեկավարում ե անասունների կերակրմանը ու կերի պատրաստման աշխատանքները:

3. Պատասխանատու յե անասունների առողջապահական դրության ու նրանց մարմնի չափության համար. զրի յե անցկացնում յերամակի դրության վերաբերյալ տվյալները:

4. Բաժանում ե անասուններին առանձին խմբերի, ըստ նրանց խնամքի, կերակրման և ծրենելու ժամանակի:

5. Կազմակերպում ե խոզերին արոտ դուրս բերելը և հետևում ե արոտների կանոնավոր ոգտադործմանը:

6. Կազմում ե ֆերմայի խոզերի բեղմնավորման պլանը, կցում ե վարադններին վորոչ մայրերի ու դեկավարում ե բեղմնավորման դործը. նախորոք սահմանում ե թե ձեռքով և թե ազատ բեղմնավորման կարգը:

7. Վարում ե բեղմնավորման և ծնելու որացողակը:

8. Ղեկավարում ե խոզերի ծննդաբերությունը. յուրաքանչյուր որ ստուգում ե հղի մայրերի դրությունը, ընտրում ե այն մայրերը, վոր պետք ե ուղարկի ծննդաբերության բաժանմունքը, սահմանում ե ուշադիր խնամք ծնող մայրերի համար և անձամբ ոգնում ե ծննդաբերության ժամանակ:

9. Անասունների վրա նշաններ ե դնում:

10. Տանում ե զոտեխնիկական և ոպերատիվ հաշվետվություն:

11. Անասնաբուծի բացակայութեան ժամանակ կատարում է նրա բոլոր պարտականութիւնները:

12. Տանում է ֆերմայում աշխատող կոլխոզներին երկրի կալիֆոսֆորացիայի բարձրացման աշխատանքները:

13. Առանձնապէս պատասխանատու յետևում է

ա) վոր բոլոր մերուկներն իր ժամանակին բեղմնավորվեն բ) վոր վոչ մի մերուկն առանց բեղմնավորման չմնա, գ) վոր յուրաքանչյուր խումբ մերուկների համար համապատասխան վարազներ ընտրվեն, դ) վոր ապահովվի յերամակի մաքսիմալ աճումը հենց իր մերուկների միջոցով: ե) վոր ծնված մերուկները կանոնավոր խնամվեն, զ) վոր անկախ սեզոնից՝ դոճինների ամբողջ սերունդը պահպանվի, ի) վոր կերը տնտեսաբար և արդյունավետ կերպով ոգտագործվի, լ) վոր յերամակը վարակիչ հիվանդութիւններից պահպանվի և հիվանդութիւնների առաջն առնվի և թ) վոր խոզերի բոլորը կանոնավոր կազմակերպվի և ապրանքային խոզերի հանձնման պլանը կենսագործվի:

ԱՎԱԳ. ԽՈՉԱՊԱՆԻ (ԲՐԻԳԱԴԻՐԻ) ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

1. Նա բաշխում է բրիգադի աշխատանքները կոլխոզներին միջև և յուրաքանչյուրին ամ-

բացում է վորոչ խմբի կամ այլ աշխատանքներ (կեր պատրաստելը, կերն ու ջուր փոխադրելը և այլն), ստուգում է բրիգադի անդամների աշխատանքները, և նրանցից յուրաքանչյուրին բացատրում է իր պարտականութիւնները կատարելու կարգը:

2. Պատրաստում է կերերը սահմանված նորմաներով և ղեկավարում է նրանց բաշխումը անասուններին:

3. Հետևում է, վոր խոզերի կացարանները (վանդակները) ժամանակին մաքրվեն, աղբը հավաքվի և խոզանոցն ու նրա կահավորումը մաքուր և կանոնավոր պահվեն:

4. Սովորեցնում է խոզապահներին, թէ ինչպէս պետք է ճանաչեն բեղմնավորելու ցանկութիւնն ունեցող մերուկներին և ղեկավարում է նրանց դուգավորումը: Անձամբ ստուգում է խոզարածների ուշադիր լինելը դեպի ցանկութիւնն ունեցող մերուկները:

5. Հետևում է անասունների առողջութեանը և ցույց է տալիս նրանց նախնական հասարակ անասնաբուժական ողնութիւն:

6. Նախորդը (2-3 որ առաջ) զգուշացնում է հզի մայրերին խնամող խոզապահներին մայրերի ծննդաբերութեան մասին, բացատրում է, թէ ինչ է նրանց պարտականութիւնն այդ դեպքում,

ներկա յե լինում ծննդաբերության ժամանակ
և ծնող մայրերին ցույց և ստալիս մանկաբարձա-
կան ոգնություն:

7. Հայտնում և տեխնիկ-ամսանարուծին
(ցուցակի մեջ մտցնելու համար) տեղի ունեցած
ծննդաբերությունների և ծնված գոճիների քա-
նակի մասին և այլն ու ինքն ել պահում և ծնած
մերուների, ծնելու ժամանակի և գոճիների հա-
շիվը:

8. Անասնաբուծի ցուցմունքներով սահմա-
նում և գոմաղբը պահելու տեղը և հետևում ե,
վոր գոմաղբը և զերիլը կանոնավոր հավաքվի
աղբի արկղի մեջ և լցվելուց հետո դուրս տարվի:
Ղեկավարում և վանդակների սղխտակացման ու
ախտահանման աշխատանքները:

9. Կշռում և խոլերին:

10. Տանում և աշխատանքների ցուցակը
(տարելը):

11. Հետևում և ներքին կարգ ու կանոնների
վրադործման և վոր անասուններին իր ժամանա-
կին և ուշադրությամբ կերակրեն ու ջուր տան:

12. Հայտնում և Ֆերմայի վարիչին, անաս-
նաբուծին և անասնաբուժակին հիվանդացած ա-
նասունների մասին:

13. Անձնապես պատասխանատու յե իրեն
հանձնարարված անասունների և իր բրիդադի
կոլխոզնիկների աշխատանքի վորակի համար:

14. Խոզապահներին իրենց պարտականու-
թյունները ցույց տալու և սովորեցնելու նպատա-
կով մի քանի վանդակներում ինքն և աշխատանք-
ները տանում:

15. Բրիդադի կոլխոզնիկների միջև կադմա-
կերպվում և հարվածախուլթյուն և սոցմրցում:

ՀԱՍՍԿԱՎՈՐ ՅԵՎ ԶԱՀԵԼ ԽՈԶԵՐ ԽՆԱՄՈՂ ԽՈԶԱՊԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Խոզապահը պատասխանատու յե իր խո-
զերի, գոճիների խմբերի համար (նրանց կերա-
կրելու, խնամքի և սերունդը պահպանելու վե-
րաբերյալ):

2. Խոզերը կերակրվում և յուրաքանչյուր
կերակրելուց հետո, ջրվում են ավաղ խոզապա-
հի կամ Ֆերմայի վարիչի սահմանած նորմանե-
րով և միշտ վորոչ ժամանակ: Խոզապահները կեր
և ջուր տալու կարգի մեջ ինքնուրույն վորչ մի
փոփոխություն մտցնել չեն կարող:

3. Խոզապահը պարտավոր և կերակրելուց
հետո հիմնովին մաքրել մսուրը և հիվանդու-
թյուններից խուսափելու համար չաբաթը յերկու
անգամ լվանալ տաք ջրով ու սոդայով:

4. Խոզապահը պարտավոր և ավաղ խոզապահի
կամ Ֆերմայի վարիչի ղեկավարությամբ չաբա-
թը մեկ անգամ կռել խոզերին այն հաշվով, վոր

դեկատում իրեն հանձնարարված բոլոր խոզերը կշռված լինեն, և պահպանվի անասունները կըշռելու վերոջ հերթականութուն:

5. Խոզերը հիվանդանալու դեպքում պարտավոր ե հայտնել ավագ խողապահ բրիգադիրին կամ ֆերմայի վարիչին, վորպեսզի վարիչը միջոցներ ձեռք առնի հիվանդացած խոզերի վերաբերմամբ:

6. Այս կամ այն խոզի բժշկության անհրաժեշտության դեպքում խողապահը պարտավոր ե խնամել նրան անասնաբուժի ցուցմունքներով (յեթե միայն հիվանդացած խոզը մնում ե իր տեղը և չի տեղափոխվում մեկուսարանը):

7. Խողապահը պարտավոր ե հետեվել խոզերին, վորպեսզի բաց չթողնի նրանց բեղմնավորման ժամանակը և առաջի նկատած դեպքում հայտնել այդ մասին խողապահ-բրիգադիրին կամ ֆերմայի վարիչին, վոր բեղմնավորումը կատարվի իր ժամանակին:

8. Պարտավոր ե թույլ չտալ, վոր մատղաշների պատահական բեղմնավորում կատարվի: Թույլ տալու դեպքում նա տուժի յե յենթարկվում՝ իջեցնելով աշխորը այն չափով, ինչպիսին ընդունված ե ֆերմայի ներքին կանոններում:

9. Ձմեռ ժամանակ խողապահը պարտավոր ե չաբաթը յերկու անգամ մաքրել խոզերին խո-

դանակով կամ մաշակայով, իսկ աշնանը՝ բրիգադիրի ցուցմունքներով, ջրով կամ ախտահանող հեղուկով լվանալ:

ՀՂԻ ՄԱՅՐԵՐԻ ԽՆԱՄՈՂ ԽՈԶԱՊԱՀՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բացի վոչ հղի խոզերի խնամքի բոլոր կանոններից, հարկավոր ե նաև հետեվյալը՝

1. Անհրաժեշտ ե հղի մերուններին պաշտպանել հարվածներից և վնասվածքներից. հղի մայրերի բաժանմունքների (վանդակների) մոտ պետք ե կախել պլակատներ՝ նախազգուշացնելու համար, վոր հղի մերունների հետ զգուշ վարվեն:

2. Ծննդաբերությունից յերեք շաբաթ առաջ մորը հնուտ արոտ չպետք ե քել, բայց հադիավոր ե ամեն որ նրան դուրս բերել մոտիկ տեղ արոտի և զրոտանքի, վորպեսզի չչաղանա:

3. Ավելի լավ ե ծնելուց 2 որ առաջ մերունին իր վանդակից դուրս չհանել. վանդակը հարկավոր ե լավ մաքրել և հիմնովին ախտահանել:

4. Խոզի տակի ցամաքարը պետք ե ամեն քր փոխել և միշտ ել տակը շատ ցամաքար փռել:

5. Մերուններին առանց հսկողության չպետք ե թողնել:

6. Ծննդաբերությունից հետո մերուններին

պետք ե տալ տաք (սենյակի ջերմութեան) և մաքուր ջուր. չպետք ե տալ սառած կարտոֆիլ կամ փչացած մթերքներ:

7. Խոզի ծննդաբերությունից հետո ցամաքի հալածելը պարտաւորեցուցիչ ե:

8. Խոզի ծննդաբերությունից հետո, բոլոր գոճիններին հալածում են, կտրում են նրանց պորտերը փորից 3-4 մատ յերկարութեամբ, սըրբում են չոր ծղոտով և դնելով կոշտ մեջ, փափուկ ծղոտի վրա՝ ծածկում են մի վորեւ տաք բանով և խոզանոցից դուրս են տանում:

ԳՈՃԻՆՆԵՐԻՆ ԽՆՍՄՈՂ ԽՈԶԱՊԱՀՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Յուրաքանչյուր խողապահ պատասխանատու յե իրեն խնամքին հանձնված գոճիններին կերակրելու, խնամելու և պահպանելու համար:

2. Փոքրիկ գոճիններին նոր ծնած մորը ծծելու պետք ե թողնել ծննդաբերությունից հետո յերկու ժամից վոչ չուտ:

3. Ավելի թույլ գոճիններին առաջին 5-7 օրը պետք ե տրամադրել մոր առաջի, կաթով ավելի հարուստ ծծերը (յուրաքանչյուր գոճին հետո սովորում ե իր ծծին (պտուկին)):

4. Ծնվելուց հետո 5-7 օրվա ընթացքում, յերբ դեռ գոճինները թույլ են և դանդաղաչարժ,

հարկավոր ե կերակրելուց հետո նրանց վերցնել մոր մոտից, այլ կերպ մայրը կարող ե նրանց վտտի տակ տալ և խեղդել:

5. Գոճիններին՝ ծծելու համար մոր մոտ պետք ե թողնել օրը 4-5 անգամ:

6. Յերբ մեկ ծննդաբերությունից ստացված են մեծ քանակութեամբ գոճիններ, չպետք ե թողնել նրանց մոր տակ, այլ պետք ե բաշխել համարյա միաժամանակ ծնած մայրերի մեջ, թողնելով մոր տակ վոչ ավել քան 10 գոճի:

7. Այն բոլոր գոճինները մարմին, վորոնց տալիս ենք քիչ գոճիններ ունեցող մի ուրիշ մերունի, հենց նրա սեփական գոճինների հետ միասին քսում ենք վորեւ հոտավետ հեղուկ (կվաս, կրեոլինի, նավթի թույլ լուծույթ), վորպեսզի խողը չկարողանա տարբերել իր գոճիններին ոտորներից և թույլ տա, վոր ծծեն:

8. Ծնած խոզին պետք ե կերակրել լավ, բայց նորմալով:

9. Գոճինները առաջին յերկու շաբաթը կերակրվում են միայն մոր կաթով, արհեստական ձեւով կերակրելիս կաթը տաքացնում են:

10. Չորս շաբաթական գոճինների մոր կաթը կարելի յե փոխարինել հետեւյալ խառնուրդով՝

Մի մասը գարի, մի մասը՝ վարսակ և փեկ մասը վիկ կամ սխեռ (բոլորը մանրացրած):

Այդ կերից գոճուն որական պետք ե տալ իր կենդանի քաշի $\frac{1}{8}$ - կամ 6 տոկոսի չափ. պետք ե տալ որը 5 անգամ, խառնելով կերը ջրի կամ կաթի հետ:

11. Փոքրիկ գոճիններին պետք ե կերակրել առանձին կերկարելու բաժանմունքներում, մոր բնակարանից առանձնացրած, (վորպեսդի մայրը գոճինների կերը չուտի):

12. Պետք ե հետևել, վոր գոճիններն ուտեն կերը:

13. Կերակրելուց հետո, պետք ե լուր մաքրել ամանները և յուրաքանչյուր կեր տալուց հետո խնամքով լվանալ (կերի մնացորդները հավաքել մի վորոչ տեղ և տալ հասակավոր խոզերին):

14. Հինգ որը մեկ անգամ բոլոր կերակրամանները պետք ե լվացվեն տաք ջրով՝ սողայի հետ, վորպեսդի գոճինները վորեւ հիվանդությամբ չվարակվեն:

15. Խողապահը առանց Ֆերմայի վարիչի և ավագ խողապահի զիտության իրավունք չունի ինքնադուխ գոճինների կերի և խմելու ջրի չափը փոփոխել:

16. Կերակրելու բաժնում միշտ պետք ե ունենալ ածուխ, կավիճ, ավագ՝ արկղների մեջ, վորպեսդի գոճինները նրանց մեջ կարողանան

փորփորել: Հարկավոր ե կերակրամաններ և հատակը մաքուր պահել:

17. Գոճինների կանաչ կերը խոտով փոխարինելու դեպքում, պետք ե խոտը տաք ջրով խաշել:

18. Խորհուրդ չի տրվում գոճիններին չափազանց տաք կերակուր տալ:

19. Գոճիններին ծեծելը կատեգորիկ կերպով արգելվում ե. այդ հայտարարելու դեպքում համացավոր կոլխոզնիկը անմիջապես պետք ե հեռացվի աշխատանքից:

20. Սֆառ ժամանակ պետք ե գոճիններին շաբաթը մեկ անգամ լվանալ:

21. Լավ յեղանակներին փոքրիկ գոճինների գրոսանքը անհրաժեշտ ե:

22. Զի կարելի թույլ տալ, վոր մեղը խողատան հատակի վրա կանդ առնի, վորպեսդի գոճինները չլամեն և չհիվանդանան փորահարինքով:

23. Պետք ե ամեն որ խողանոցի աղբը մաքրել և գոճինների տակ ցամքար փռել: Չմեռ ժամանակ ցամքարը ավելացնում են:

24. Գոճինների մեջ փորլուծ առաջանալու դեպքում անհրաժեշտ ե բնակարանը ախտահանել՝ հատակը և կերակրամանները լվանալ տաք ջրով՝ մոխրաջրի հետ, կամ կիր փռել հատակի վրա կամ ել հատակը ու պատերը թրջել կրեոլինի

լուծույթով (մեկ շիշ ջրին վերցնել յերկու դուլ կրեոլին) :

Կարելի չե խորհուրդ տալ և հետեւյալ միջոցները՝ կերակրող մոր ծծեբը թրջել կրեոլինի 2 տոկոսային լուծույթով. գոճիները մոր կաթի հետ կընդունեն նաև կրեոլինը :

25. Յերբ գոճիները հիվանդանում են կամ պարզ նկատելի չե, վոր վարակիչ հիվանդություն կան նրանց մեջ, պետք ե պահանջել անասնաբուժ, վորպեսզի ժամանակին անհրաժեշտ միջոցներ ձեռք առնվեն :

Ծայրահեղ դեպքում անմիջապես պետք ե կանչել անասնաբուժակին :

ԽՈՋԱՊԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Նշանակած ժամին դուրս ե հանում խոզերին արոտ և հետ ե քլում իրենց տեղերը :

2. Հետեւում ե կանաչ խոտի և արոտի հաւասարաչափ ոգտադործմանը :

3. Անասնաբուժի սահմանած ժամին խոզերին քլում ե դետի մոտ կամ մի այլ պայմանավորված տեղ՝ ջուր տալու համար :

4. Սաստիկ արեւի ժամանակ խոզերին քլում ե չարդախի տակ կամ մի հով տեղ :

5. Նշան ե անում այն մայերրին, վորոնք բեղմնավորվելու ցանկություն են ցույց տալիս և հայտնում ե այդ մասին բրիգադիրներին :

6. Անմիջապես տեխնիկ-խողապահին կամ բրիգադիրին ե հայտնում հիվանդացած անասունները մասին :

7. Խիստ արգելվում ե արածացնելիս ծեծել խոզերին կամ արագ քշել, նստմանավանդ թույլերին և կաղերին : Առանձին պատասխանատվություն ե դրվում խողապահի վրա հղի մայերրի վերաբերմամբ. նա պարտավոր ե հետեւել ամեն ժամանակ, վոր մյուս խոզերը չհրեն հղի խոզերին և թույլ չտա, վոր խոզերը իրար հետ կռվեն :

ՊԱՀԵՍՏԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ընդունում ե, պահում և ծախսում ֆուրաժը, նույնպես և դուլքը :

2. Մաքուր և կարգին ե պահում պահեստը, ամեն որ մաքրում ե պահեստն ու խոտանոցը՝ ավելիով և ջրով լվանալով :

3. Պաշտպանում ե կերը պահելու ամանները վիշանալուց :

4. Միջոցներ ե ձեռք առնում վոչնչացնելու մկներին և առնետներին :

5. Հետեւում ե, վոր կարտոֆելը ու արմատապտուղները չիջանան ցրտից կամ այլ հանդամանքներից :

6. Զեկուցում ե ֆերմայի վարիչին կերի

դրութեան մասին, անձնապես պատասխանատու
յե կերի պահպանման, նրա կանոնաւոր բաշխ-
ման, վատ պահելուց փշանալու և վատնելու հա-
մար:

7. Բաց ե թողնում ֆուտբոլ ֆերմայի վա-
րիչի կարգադրութեամբ կամ նրա սահմանած
կարգով:

8. Հող ե տանում, վոր կեր պատրաստելու
տեղում ժամանակին պետք ե յեղած չափով ֆու-
րածի պաշար և ինվենտար լինի:

9. Նախորդ պատրաստում ե կերերի խառ-
նուրդը անասնաբուծի ցուցմունքներով:

10. Իր ժամանակին ֆերմայի վարիչի մի-
ջոցով հայտնում ե կոյտնտեսութեան զբառնեյա-
կին անհրաժեշտ տեղեկութիւնները:

11. Քիչ քանակութեամբ խողեր ունեցող
ֆերմաներում պահեստապետի պարտականու-
թիւնները կատարում ե ֆերմայի վարիչը:

ԱՆԱՆԱԲՈՒԹԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սահմանում ե հիվանդ անասուններին
խնամելու համար հաստատուն սանիտարական
ոեժիմ և մեթոդներ:

2. Սահմանում և կենսագործում ե նախարդ-
պուշական, բժշկական և սանիտարական ձեռնար-
կումներ. սահմանում ե կանոններ կողմնակի ան-

ձանց համար ֆերմայի տերիտորիան, առանձ-
նապես խողանոցները մտնելու առթիւ:

3. Անմիջական բուժօգնութիւն ե հասցնում
անասուններին ցերեկվա և գիշերվա ամեն մի
ժամին:

4. Տանում ե սանիտարական և կուլտուրիթա-
կան աշխատանքներ և ծանոթացնում ե խողա-
պահներին հիվանդութիւնների և հիվանդանալու
պատճառների հետ:

5. Պատասխանատւութեան ե կանչում այն
անձանց, վորոնք խախտում են Հողօրդկոմատի
և կոյտնտեսարոնի անասնաբուժական կանոննե-
րը և հրահանգները:

6. Կազմակերպում ե պատվաստումներ իր
կամ զբոսից հրաւիրված ուժերով:

7. Սահմանում ե կուտելու ժամանակն ու
կարգը և կազմակերպում ե այն:

8. Ղեկավարում ե անասնաբուժականների ու
սանիտարների աշխատանքը:

9. Առանձնապես պատասխանատու յե անա-
սունների առողջութեան և վարակիչ հիվանդու-
թիւնների տրամաժման համար:

Անձամբ ստուգում ե անասնաբուժականների և
սանիտարների աշխատանքի տեխնիկան ու
ճշտապահութիւնը և պարբերաբար հրահանգում
ե նրանց, ինչպես զենկ անասնաբուժական սպա-
սարկման դործը:

ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ամեն որ քննում ե անասունների առողջության դրությունը:
2. Հիվանդ անասուններին ողնություն ե հասցնում:
3. Գործադրում ե անասնաբուժի բոլոր ցուցմունքները ե ֆերմայում սահմանված անասնաբուժական բոլոր կարգերը:
4. Գործադրում ե վարակիչ ե ճիճվային հիվանդությունների դեմ կռիվում բոլոր միջոցները:
5. Սահմանված ժամկետներին կատարում ե շենքի արտահանումը:
6. Տանում ե անասնաբուժական սանիտարիական աշխատանքները:
7. Տանում ե վարակման դեմ սահմանված տեխնիկական նախազգուշացման միջոցները:
8. Կռում ե վարադներին ե մերժումներին:
9. Հսկում ե հղի ե ծնած մայրերին. կոտրում ե նոր ծնված գոճիների առամները ե սղուցում ե վարադների ժանիքները:
10. Տանում ե հիվանդությունների հաշվեառումը:
11. Առանձնապես պատասխանատու յե վարակիչ հիվանդությունների ե ծննդաբերության

ժամանակ ողնություն չհասցնելու հետեվանքով առաւելած անասունների, այլե վարակւած կեր տալու ե անվուրթ կռտելու համար ե այլն:

ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ողնում ե անասնաբուժիչ ե անասնաբուժակին անասուններին բժշկական ողնություն հասցնելիս:
2. Ամենորայ ողնություն ե հասցնում հիվանդ անասուններին անասնաբուժի ցուցմունքներով ե համաձայն սահմանված կարգերի:
3. Եարունակ հսկում ե շենքի մաքրության վրա:
4. Մեկուսացնում ե կասկածելի հիվանդ անասուններին ե հայտնում այդ մասին անասնաբուժին: Ողղապահի պարտականություններն ե կատարում հիվանդացած խոզերի վերաբերմամբ ե սպասարկում ե խոզերի մեկուսարանը:
5. Տանում ե ժուրնալ-դիրք՝ անասունների առողջության դրության մասին:
6. Ախտահանում ե շենքը ե անասնաբուժի ու անասնաբուժակի ցուցմունքներով պատրաստում ե ախտահանման միջոցները:
7. Պահում ե անասնաբուժական գործիքները ե ախտահանման ու բժշկական միջոցները:

8. Առանձնապես պատասխանատու յե, ա-
նասնաբուժակի հետ համասար, անասունների
դրուժյան համար: Փոխարինում և անասնաբու-
ժակին՝ նրա բացակայության ժամանակ:

ՑԵՐԵԿՎԱ ՅԵՎ ԳԻՇԵՐՎԱ ՊԱՀԱԿՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Պահակը հսկում է անասուններին խոզա-
պահների բացակայության ժամանակ:

2. Ուշի-ուշով հետեւում է ծնելու մոտիկ
խոզերին:

3. Ոգնում է խոզերին ծննդաբերության ժա-
մանակ. խնամում է նոր ծնած դոճիկներին:

4. Կերակրում է խոզերին կաթով. հետեւում
է, վոր մայրը նրանց չուտի:

5. Ուշադրություն է դարձնում յապտերնե-
րին և իր ժամանակին նրանց մաքրում է ու վա-
ռում:

6. Հերթապահությունն ուրիշին հանձնելիս,
հայտնում է հերթական ծնելիք մայրերի մա-
սին:

7. Վառում է վառարանները և ջուր է տա-
րացնում:

8. Պահպանում է անասունների չենքը հա-
փըշտակումից և հրդեհից: Բաժանում է կովով
խոզերին, նամանավանդ կովով վարազներին:

ԿԱՖԻՆՆԵՐԸ ՎՏԱՆԳՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Ճերմայի վարիչը պարտավոր է նախա-
զգուշացնել աշխատողներին հնարավոր դժբախտ
դեպքերի և ֆերմայում վարակիչ հիվանդու-
թյուններ մուտք դործելու մասին: Այլև պատից
պետք է կախի արմատապտուղ կոտրող, քուսպ
մանրացնող և ուրիշ գործիքների ու մեքենաների
գործածության կանոնները:

2. Ճերմայում վարակիչ հիվանդություններ
տարածվելու առաջն առնելու նպատակով անհրա-
ժեշտ է խստորեն գործադրել հետեւյալ գլխա-
վոր կանոնները՝

ա) Վոչ մի անասուն չընդունել խոզանոց
մինչև, վոր նա 20 օր կարանտինում մնացած չլի-
նի:

բ) Թույլ չտալ կողմնակի անձանց մուտքը
խոզանոց, իսկ անհրաժեշտ դեպքում նրանց վոտ-
ները ախտահանման յենթարկել, կամ ել հազցնել
հատուկ կոշիկներ:

գ) Ճերմայի տերիտորիայի վրա չպահել և
թույլ չտալ առանց կապի շներ:

դ) Բնական պահանջները կատարել արտո-
նոցներում:

ե) Բաց արտաքնոցներ չունենալ:

զ) Խոզանոցի մնացորդները բակը չթափել:

ԱՐՏԱՌԱՆՔԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ ՅԵՎ
ԳՈՐԾԱՎԱՐՁԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԿԱՖԻՆ-ՈՒՄ

1. Կոլխոզնիկների արտադրանքի և աշխատանքի դործավարձային զնահատման համար վորոշ նորմաներ և աշխատանքի արդյունքի վորակական ցուցանիշները սահմանելը հանդիսանում է աշխատանքի արտադրողականության և արտադրանքի վորակի բարձրացման հիմքը :

2. Կոլխոզնիկների աշխատանքի զնահատումը կատարվում է աշխուրներով. աշխուրները դրանցովում են կոլխոզնիկների աշխատանքային դրքքում՝ քանակական և վորակական ցուցանիշների համար սուանձին :

3. Աշխուրների դրանցումը կատրվում է ամենորյա անվանական ցուցակի հիման վրա, վորի մեջ նշվում է յուրաքանչյուր կոլխոզնիկի կատարած աշխատանքի քանակը (խողերի քանակը, վորոնց սպասարկել է մի ուրում այս կամ այն կոլխոզնիկը) և այդ աշխատանքի վորակը այն ուրեքին, յերբ այդ վորակը կարտահայտվի : Որինակ՝ մի մորից ծնված դոճինների քանակը, նըրանց կենդանի քաշը՝ ծծից կտրածները խմբի մեջ տեղափոխելիս, ծծից կտրածների քաշի հավելումը՝ նրանց բոումն սկսելու ժամկետին. մատղաշների քաշի հավելումը՝ նրանց հասակ աումած մերուանների կամ վարաղների շարք տեղա-

փոխելիս, բավուլ խողերի քաշի հավերումը, մորթելու տանելու մոմենտին և այլն :

4. 1-ին և 2-րդ կետերի համաձայն, ԿԱՖԻՆ-ներում սահմանվում են ներքոհիշյալ արտադրանքի նորմաները և այդ նորմաների զնահատումը աշխուրներով :

Խոզապահին կամ խոզապահուհուն՝

Խոզերի խմբերը, ըստ հասակի, վերոնց խնամում և խոզապահը	Արտադրանքի նորմաները	
	Մսուր- վին պահ- վածքի ընթացում	Արտա- վին պահ- վածքի ընթացում
Հասակավոր և ջահել մտյրեր 9 ամսից մինչև — — — — —	20	20
Վարազ—արտադրողներ — — — — —	20	20
Ծծից կտրած գոհներ 2—4 ամսական	100	125
Բեմոստի համար մատղաշ խոզեր 4-ից մինչև 9 ամսական — — — — —	80	100
Բազմոց մատղաշներ 4—9 ամսական — — — — —	75	100
Խոզաբաժին՝ ծծից կտրածներին, բե- մոստացու մատղաշներին, ստերջ և հզի մերուններին արածաղցնելու համար — — — — —	Բեղմնավորման նորմաները 100 մերուն	
Հերթապահ պահապանին՝ մերունների խոզանոցում — — — — —	50	ծնած մտյր

Խոզերի խնամքի ու պահվածքի համար

Գործավարձը աշխուրհերով մի գլխին սպասարկելու համար և աշխատանքի վերջնական արդյունքը	
Յուրաքանչյուր գլխի հա- մար մի որում՝ ըստ քա- նակական ցուցանիշների	Աշխատանքի վերականգն ցուցանիշների համար
0,05 աշխուր յուրաքանչյուր շուր յերկու մերունի հա- մար:	0,6 աշխուր յուրաքանչյուր մինչև ծծից կտրելը՝ պահած գո- հու համար, 0,07 աշխուր ծծող գոհներին մեկ կիլոգրամ ավելու- ցած քաշի համար:
0,04 աշխուր յուրաքանչյուր վարազի համար:	0,1 աշխուր յուրաքանչյուր բեղմնավորված մոր համար:
0,03 աշխուր յուրաքանչյուր տասը ծծից կտրած- ների համար, ըստ վորում վոչ լրելվ տասնյակը, ըստ հզից ափսիս, ընդուն- վում և իբրև լրելվ տասնյակ	0,08 աշխուր յուրաքանչյուր 5 կլգ. ավելացած քաշի համար:
0,01 աշխուր յուրաքանչյուր հինգ գլխի համար (վոչ լրելվ հնգյակը ըն- դունվում և իբրև լրելվ):	0,03 աշխուր յուրաքանչյուր 2 կլգ. ավելացած քաշի համար:
0,02 աշխուր յուրաքանչյուր 15 գլխի համար (վոչ լրելվ տասնհնգյակը հա- մարվում և լրելվ, յեթե կի- սից ափսիս չեն):	0,05 աշխուր յուրաքանչյուր 3 կլգ. ավելացած քաշի համար:
Յուրաքանչյուր գլխի հա- մար կատարած մեկ որվա աշխատանքի գնահատումը:	
0,1 աշխուր	Սեզոնային աշխատանքի ար- տադրանքը: Արտա 267անը հաշ- վելով 150 որ յուրաքանչյուր խո- զաբաժնի մի որվա բեմոստացում ընդունելով 100 գլուխ:
0,03 աշխուր յուրաքանչյուր երկու մերունի համար:	$100 \times 150 \times 0,01 = 150$ աշխուր:
	Հաշվելով ծննդաբերությունը վերաբար—հեղափոխի և տարե- կան բեմոստացումը 50 մերուն, 12 ամսվա աշխատանքի համար՝ $50 \times 360 \times 0,03 = 370$ աշխուր:

Արտադրանքի նորմաները և վերականգնողական շուրջանիչները կատարելու դեպքում կոլխոզներին մի տարում կարող է ունենալ աշխուրթի հետև-վյալ քանակը՝

1. Մայրերին և գոմիներին մինչև ծծից կտրելը

խնամող խոզապահը՝

ա) Մայրերին մի տարվա ընթացքում՝

$$\begin{aligned} \text{խնամելու համար} & \dots 20 \times 360 \times 0,05 : \\ & 2 = 180 \text{ աշխուր.} \end{aligned}$$

բ) Յուրաքանչյուր մորից մի տարվա ընթացքում 9 գոմի ստանալու համար

$$9 \times 20 \times 0,60 = 108 \text{ աշխուր.}$$

գ) Յուրաքանչյուր գոմուն մինչև ծծից կտրելը 2 սոմսական հասակի և 10 կլգ. քաշի հասցնելու համար

$$9 \times 20 \times 10 : 0,08 = 126 \text{ աշխուր.}$$

$$\text{Ընդամենը՝ 414 աշխուր.}$$

2. Արտադրողները խնամող խոզապահը՝

ա) խնամելու համար՝ մի տարվա ընթացքում վարադներ

$$20 \times 360 \times 0,04 = 288 \text{ աշխուր.}$$

$$\begin{aligned} \text{մայրեր} & \dots 20 \times 50 \times 0,10 = 100 \\ & \text{աշխուր.} \end{aligned}$$

$$\text{Ընդամենը՝ 388 աշխուր.}$$

3. Ծծից կտրածներին խնամող խոզապահը՝

ա) Մի տարում 650 գլուխ սպասարկելու համար, յուրաքանչյուր գլուխը 60 որ

$$650 \times 60 \times 10 \times 0,03 = 117 \text{ աշխուր.}$$

բ) Ծծից կտրածների կենդանի քաշը մինչև 30 կլգ. հասցնելու համար, հաշվելով ծծից կտրելու մոմենտից մինչև բռնելու կամ բեմոտի հանձնելու մոմենտը. քաշի ավելացում 20 կլգ.

$$650 \times 20 \times 20 \times 0,08 : 5 = 208 \text{ աշխուր.}$$

$$\text{Ընդամենը՝ 325 աշխուր.}$$

4. Բեմոնտացու մատղաշներին խնամող խոզապահը՝

ա) Տարեկան 320 գլուխ սպասարկելու համար, հաշվելով յուրաքանչյուրի համար 360 որ.

$$220 \times 360 \times 0,01 : 5 = 158 \text{ աշխուր.}$$

բ) Կենդանի քաշը 30 կիլոգրամից մինչև 80 կիլոգրամ հասցնելու համար, քաշի ավելացում 50 կիլոգրամ $220 \times 50 \times 0,03 : 2 = 165$ աշխուր:

$$\text{Ընդամենը՝ 323 աշխուր.}$$

5. Բավոլ խոզերին խնամող խոզապահը՝

ա) 210 գլուխը մի տարվա ընթացքում սպասարկելու համար հաշվելով 360 որ

$$210 \times 360 \times 0,02 : 15 = 101 \text{ աշխուր.}$$

բ) Կենդանի քաշը 30 կիլ. մինչև 100 կիլ.

Հասցնելու համար (քաշի ավելացում 70 կգ.)
 $210 \times 70 \times 0,05 : 3 = 245$ աշխոր.

Ընդամենը՝ 346 աշխոր:

4. Կոլխոզնիկների աշխատանքը ոժանդակող
գործերի՝ խոտ, միայա, ջուր կրելու համար հաշ-
վի յե առնվում ֆերմայում և գնահատվում և
կոլտնտեսություն արտադրանքի նորմաներով:

5. Վարչա-տեխնիկական պերսոնալի աշխա-
տանքը վարձատրվում և նույնպես գործավար-
ձային սխեմով՝ հիմք ընդունելով խողապահի
միջին արտադրանքը, ըստ վորում:

Ֆերմայի վարիչն ստանում է 150 տոկոս,
համեմատած խողապահի միջին արտադրանքի
հետ, և ապրանքային խողերին պետությունը
հանձնելու պլանը իր ժամանակին կատարելու
համար ստանում է 25 տոկոս (նույնպես խողա-
պահի միջին արտադրանքի համեմատ), ընդամե-
նը 175 տոկ:

Տեխնիկը և անասնաբուժակը-խողապահի մի-
ջին արտադրանքի 150 տոկոսը:

Բրիգադիրը, կերապահը, անասնաբուժա-
կան սանիտարը խողապահի միջին արտադրանքի
125 տոկոսը:

Ապրանքային խողերը պետությունը հանձնե-
լու պլանը գերակատարելու դեպքում ֆերմայի
վարիչին հաշվվում է լրացուցիչ յուրաքանչյուր

պլանից դուրս պետություն հանձնած 5 խողերի
համար մեկ աշխոր:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ ՅԵՎ ՀԵՏ ՊԱՀՈՒՄՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՈՐԱԿԻ ՀԱՄԱՐ

1. Աշխատանքի արտադրողականությունը
բարձրացնելու և լավագույն խողապահ-հարվա-
ծայիններին խրախուսելու նպատակով, վորոնք
արտադրանքի նորմաները գերակատարել են թե՛
քանակական և թե՛ վորակական տեսակետից,
կոլտնտեսություն վարչությունը ֆերմայի վարի-
չի մասնակցությամբ, բաշխում է պարգևներ
պարգևավորման ֆոնդից, վորը համաձայն պա-
մանագրի, պետք է կազմի ֆերմայի բովանդակ
յեկամտի 3 տոկոսը:

2. Ֆերմայում աշխատող կոլխոզնիկներին,
պարգև և տրվում, յերբ նրանք կատարել են հե-
տևյալ ցուցանիշները՝

ա) Արտադրանքի նորմաների գերակատա-
րումը:

բ) Կերը անասնաբուժական, առանց պա-
կասացնելու խողերի և դոճիկների կենդանի քաշն
ու աճումը:

գ) Մերուկների վիժումներ չլինելու և մե-
ռած գոճիկներ չծնվելու դեպքում:

դ) Խողանոցները և անասուններին մաքուր
պահելը:

ե) Ագրոն և դոստեխնիկական ու անասնաբուժական ձեռնարկումները բարելավձորեն կիրառելու համար:

զ) Ֆերմայի աշխատանքներն ոռոգիանալցմանն ու բարելավմանը, նույնպես և դեպի գոլջին ու անասունները խնամքով վերաբերվելու համար:

է) Մայրերին իր ժամանակին վարազով ծակելը ու ստերջ մայրերի և անհաջող ծննդաբերություն տոկոսների իջեցումը:

Պարգեվատրումը կատարվում է աշխուրհով, արտադրանքով, սովորելու ուղարկելով, գրքեր նվիրելով, եղակաբար ուղարկելով և այլն:

3. Աշխատանքի դիսցիպլինան խանդավառներին, ֆերմայի անասուններին ու գոլջին անխնամ վեարբերվողների, արտադրանքի նորմաները չկատարողների, գործառնալի վորակն ու կոտնները խանդավառողների նկատմամբ գործադրվում են ազդելու հետևյալ ձևերը՝

ա) Հասարակական նախատինք արտադրական խորհրդակցություններում, պատի թերթերում, սև տախտակի միջոցով և այլն:

բ) Հանդիմանություն բերվողների անունից, (ախագ խոզապահ) ֆերմայի վարիչից և կոլտնտեսության վարչությունից:

գ) Աշխատանքի զնահատման իջեցումը աշխ-

ուրերով (ստանում է կարգավատրման ֆոնդի մեջ տուժի չափը և այն գործադրելու կարող սահմանում է կոլտնտեսության վարչությունը):

դ) Ստորին աշխատանքի փոխադրելը:

ե) Վորոչ ժամանակամիջոցում աշխատանքից հեռացնելը:

զ) Աննուզողների լողերին, հասարակական աշխատանքի հաշվին ապրել սիրողներին ընդհանուր ժողովի վորոչմամբ հեռացնել կոլտնտեսությունից:

է) Ֆերմայի գույքը դիտակցաբար փչացնելու և իսկական վնասարարություն համար մեղադրվողներին վոչ միայն հարկադր է հեռացնել կոլտնտեսությունից, այլև դատի տալ:


4. Բացի այդ՝ Հանրապետական Յերկրային (Մարզային) լիազորների վորոչմամբ, նայած ֆերմայի մեծության և հանձնած ապրանքային արտադրանքի քանակին, ֆերմաների վարիչներին կարելի չէ դուրս գրել փողային լրացուցիչ վարձ տարեկան 50-150 ռուբլի:

Համամիութենական Կոլտնտեսությունների և խոզաբուծկոլտնտեսությունների Վարչությունը առաջարկում է բաշօր կոլտնտեսություններին, ֆերմաների վարիչներին, չրջանային, մարկային և յերկրային կոլտնտեսություններին՝ սեպտեմբերի

30.588

15-ից վոչ ուշ, ապահովել, այն՝ ա
նախընտրելով ինքնուրույն աշխատանքի
մակերդման կանոնների իրական գործադրումով
կյանքում:

ԽՈՁԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՈՆՏՏԱԿՆՏՐՈՆ



ՀՀ Ազգային գրադարան



NL0209245